ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 սեպտեմբերի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

110
(3319)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՈՂ՞Ի Է ԿԲ-Ն ԱՉՔ ՓԱԿՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը Կենտրոնական բանկին կոնկրետ խնդիր է ներկայացրել՝ քաղաքացիները դժգոհում են, որ բանկերը «0% ապառիկ» կամ «անտոկոս ապառիկ» են խոստանում, բայց վարկը ձեւակերպելուց հետո պարզվում է՝ ամիսներ անց քաղաքացիները անտոկոս վարկի համար վճարում են տոկոս: ԿԲ-ն մատնանշում է օրենքը, իսկ իրականությունը դրանից չի փոխվում:

«Ժողովուրդ» օրաթերթը երկարատեւ սպասումից հետո ԿԲ-ից ստացավ պատասխան, որը փաստացի շրջանցում է խնդրի ամենակարեւոր հատվածը: Կենտրոնական բանկը մանրամասն ներկայացնում է, որ սպառողն իրավունք ունի վարկը վաղաժամկետ մարել, որ ավել վճարումը պետք է ուղղվի մայր գումարի նվազեցմանը, որ պետք է փոխվի մարման ժամանակացույցը, եւ որ բանկը պարտավոր է այդ մասին տեղեկացնել հաճախորդին: Բայց «Ժողովուրդ» օրաթերթը ԿԲ-ին սա չէր հարցրել: Մեր հարցը շատ ավելի պարզ էր. եթե քաղաքացին, օրինակ, «անտոկոս» 6 կամ 12-ամսյա ապառիկի շրջանակում նախատեսվածից ավելի գումար է վճարում, այդ գումարը փաստացի ինչպե՞ս է հաշվանցվում, եւ արդյոք բանկն իրավունք ունի այն տեղափոխել հաջորդ՝ արդեն տոկոսով գործող ժամանակահատված:

ԿԲ-ից այս հարցի հստակ պատասխանը չենք ստացել: Ավելին՝ ԿԲ-ն ինքն է ընդունում, որ ներկայացված դեպքերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է խնդիր լինի վարկավորման ծախսի նվազեցման գործընթացում, եւ նշում է, որ ուսումնասիրության ավարտից հետո, անհրաժեշտության դեպքում, կարող են իրականացվել վերահսկողական միջոցառումներ: Այսինքն՝ քաղաքացիների բարձրաձայնած խնդիրը ԿԲ-ն ամբողջությամբ չի հերքում: Ընդհակառակը՝ ասում է, որ հնարավոր խնդիր կա, բայց դրա վերջնական գնահատականը դեռ չկա:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի որդու՝ Արգամ Աբրահամյանի նկատմամբ հարուցված քրեական գործով նախաքննությունը մոտենում է ավարտին, եւ առաջիկայում վարույթը մեղադրական եզրակացությամբ կուղարկվի դատարան: Նույն աղբյուրների փոխանցմամբ՝ նախաքննական մարմինը գործով, ըստ էության, այլեւս ծավալուն քննչական գործողություններ չունի իրականացնելու: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ սպանության գործից անջատված վարույթը շուրջ երկու տարի քննվել է Քննչական կոմիտեում, իսկ վերջին առանցքային գործողություններից մեկը եղել է դատարանից սպանված հոգեւոր հովիվ Սողոմոն Վլասյանի հեռախոսը պահանջելը եւ դրա պարունակությունը հետազոտելը: ArmLur.am-ն ավելի վաղ հայտնել էր, որ հեռախոսում առկա են եղել նամակագրություններ եւ տարբեր խոսակցություններ Վլասյանի ու նրա կողմից հաղորդություն ստացած անձանց միջեւ: Հիշեցնենք նաեւ, որ այս գործով Քննչական կոմիտե էր հրավիրվել եւ հարցաքննվել Արգամ Աբրահամյանի կինը՝ Գագիկ Ծառուկյանի դուստր Էմմա Ծառուկյանը: Նրա ցուցմունքների բովանդակությունը, նախաքննության շահերից ելնելով, չէր հրապարակվել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

2026 թվականի օգոստոսի 25-ից իրավապահ եւ դատական համակարգում գերլարված աշխատանքային իրավիճակ է ստեղծվել: Աղմկահարույց ձերբակալություններն ու դրանց հաջորդած խուզարկությունները, հարցաքննություններն ու կալանքի միջնորդությունների քննությունները համակարգը բառացիորեն արտակարգ ռեժիմի են բերել: Ամեն ինչ սկսվեց օգոստոսի 25-ին, երբ ձերբակալվեցին ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ու նրա ավագ որդին՝ Սեդրակ Քոչարյանը: Դրան հաջորդած երկու օրերին իրավապահ եւ դատական համակարգի մի շարք աշխատակիցներ, մեր տեղեկություններով, փաստացի գիշերել են աշխատավայրերում: Օգոստոսի 27-ին հակակոռուպցիոն դատարանը բավարարեց քննիչի միջնորդությունը եւ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրեց երկամսյա կալանքը: Սակայն համակարգը դեռ չէր հասցրել դուրս գալ այս գործով ստեղծված գերլարված ռեժիմից, երբ սկսվեց մեկ այլ աղմկահարույց գործընթաց: Երեկ Քննչական կոմիտեն խուզարկություններ է իրականացրել ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանին եւ նրա ընտանիքին պատկանող ընկերություններում: Խաչատրյանը ձերբակալվել է եւ առողջական վիճակի պատճառով դատարան է տեղափոխվել շտապօգնության մեքենայով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ուսումնասիրել Սահմանադրական դատարանի դատավորների հայտարարագրերը եւ դրանք ներկայացնել հանրությանը: Այս անգամ ուսումնասիրել ենք ՍԴ դատավոր Երվանդ Խունդկարյանի ունեցվածքը: Երվանդ Խունդկարյանը Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը զբաղեցնում է 2020 թվականի սեպտեմբերի 18-ից: Երվանդ Խունդկարյանի՝ 2021-2025 թվականների հայտարարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակահատվածում նրա դրամական միջոցները եւ ֆինանսական պարտավորությունները զգալի փոփոխություններ են ունեցել: 2021 թվականի տարեվերջին հայտարարագրել էր 33 մլն դրամ կանխիկ եւ ավելի քան 13 մլն դրամ բանկային հաշիվներում, իսկ 2025 թվականին՝ 33 մլն դրամ կանխիկ, շուրջ 38 մլն դրամ բանկային հաշիվներում եւ 43.1 մլն դրամի հիփոթեքային պարտավորություն: 2021 թվականի հայտարարագրի համաձայն՝ տարվա սկզբում եւ վերջում Խունդկարյանի անունով անշարժ գույք չի հայտարարագրվել: Միաժամանակ հայտարարագրում նշված է, որ նա տարվա ընթացքում 90 եւ ավելի օր փաստացի տիրապետել է Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում գտնվող բնակարանի եւ ավտոկայանատեղիի: Դատավորն ունեցել է 2006 թվականի արտադրության Lexus մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել 2014 թվականի մայիսի 5-ին՝ գնման եղանակով:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՁԳՏԵՆՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ»

Եռաբլուրում ArmLur.am-ը զրուցել է Գառնիկ Դանիելյանի հետ:

- Պարոն Դանիելյան, այսօր (երեկ) Եռաբլուրում հիշատակվում է Արցախի Հանրապետության անկախության օրը: Ի՞նչ հրամայական ունի այս օրը հիշատակելը:

- Սա առաջին հերթին մեկտեղվելու հրամայական ունի: Պետք է կարողանանք անցյալի սխալներից դասեր քաղել, առաջ շարժվել, ամեն օր աշխատել եւ, ի վերջո, վաստակել Եռաբլուր այցելելու իրավունքը: Ես քիչ առաջ էլ ասացի՝ մենք դեռ այդ իրավունքը, կարելի է ասել, ավանսով ենք ստացել: Մեր տղաներն են մեզ այդ իրավունքը տալիս՝ այնտեղ այցելելու, որովհետեւ մինչ այսօր մենք նրանց ասելու բան չունենք: Հուսով եմ՝ կգա այն օրը, երբ կունենանք նրանց ասելու խոսք: Իսկ եթե ցանկանում ենք այդ օրվա գալուստն արագացնել, պետք է բոլորս աշխատենք օր ու գիշեր՝ առանց տրտնջալու, առանց մարդկանց աչքերին փոշի փչելու: Պետք է ունենանք ազգային պետություն, ազգային արժեքներ, գաղափարախոսություն, իշխանություններ, որոնք ձգտում են կրել այդ արժեքները եւ փոխանցել դրանք սերունդներին: Պետք է ունենանք համերաշխ, հավատքով եւ արժեհամակարգ ունեցող հասարակություն, որը չի մտածում միայն կենցաղային հարցերի կամ օտար երկրներում ավելի լավ կյանք գտնելու մասին, այլ ցանկանում է ամրանալ հայրենիքում, արմատներ գցել, շենացնել երկիրը եւ առաջ տանել ազգային իղձերն ու նպատակները՝ ոչ թե անընդհատ զիջել ու տալ:

- Ինչպե՞ս եք հնարավոր համարում Ձեր նշած նպատակների իրագործումը:

- Ես կարծում եմ՝ դա շատ հստակ եւ, ըստ էության, միակ ճանապարհն է՝ միավորվել, մեկտեղվել, միմյանց կողքին հավաքվել, ունենալ միասնական ծրագիր եւ ճանապարհային քարտեզ ու օր ու գիշեր աշխատել: Այդ ճանապարհով պետք է փոքր հաղթանակներից հասնենք մեծ հաղթանակների: Այլընտրանքային ճանապարհ, իմ կարծիքով, չկա: Իսկ այն մարդիկ, որոնք այդ ընթացքում կհոգնեն, կտրտնջան, կդադարեն պայքարելուց, նշանակում է՝ այդ ճանապարհը նրանց տեղը չէ: Պետք չէ պարզապես ձեւացնել, թե ինչ-որ բան ես անում, երբ իրականում ոչինչ չի արվում: Իմ կոչն ու հորդորն է բոլոր մարդկանց, քաղաքական եւ հանրային գործիչներին, երկրի ու պետության ճակատագրով մտահոգ բոլոր անձանց՝ գիտակցել, որ այսօր նույնպես օրհասական պահ է: Հայաստանի Հանրապետությունը լրջագույն մարտահրավերների առաջ է կանգնած: Եթե չենք ցանկանում կրկին կանգնել նոր կորուստների ու զիջումների առաջ, բոլորս պետք է գիտակցենք մեր պատասխանատվությունը:

- Պարոն Դանիելյան, ընդդիմադիր դաշտում եւս կարծես հնչում են տեսակետներ, թե Ղարաբաղյան շարժումը փակված է: Դուք ինչպե՞ս եք վերաբերվում այդ մոտեցմանը:

- Մենք ամեն օր մեռնում ենք՝ կենդանի-կենդանի, որովհետեւ Արցախն այս պահին կորցված է: Ինձ եւ իմ ընկերների կյանքի նպատակներից մեկը Արցախի վերադարձի գաղափարն է: Եթե այդ նպատակը չլինի, ես անձամբ իմ գոյությունն անիմաստ եմ համարում: Գուցե պաթոսային հնչի, բայց մեր գերեզմանները, մեր տները, մեր շեները, մեր եկեղեցիները, մեր պատմամշակութային արժեքներն այնտեղ են: Եւ այսօր մենք տեսնում ենք, թե ինչ է կատարվում դրանց հետ: Ինչպե՞ս կարող է մարդը հանգիստ նստել եւ ասել, թե դա իր կյանքի փակված փուլն է: Մենք պետք է ձգտենք վերադառնալ: Ոչ ոք մեզնից չի կարող խլել կամ անջատել Արցախի վերադարձի նպատակը եւ մեր տներ վերադառնալու գաղափարը: Դա մեզնից վերցնել հնարավոր չէ:

- Այս ընթացքում շարունակվել են նաեւ քաղաքական գործիչների եւ հանրային դեմքերի կալանավորումները: Դուք դրանք ինչպե՞ս եք գնահատում:

- Ինձ համար սա հստակ քաղաքական նպատակ ունի: Ես կարծում եմ՝ այստեղ փորձ է արվում մեկուսացնել բոլոր այն մարդկանց, որոնք իշխանությունների համար անցանկալի են եւ կարող են ընդդիմանալ նրանց քաղաքականությանը: Իմ գնահատմամբ՝ այդ ամենը մի ընդհանուր քաղաքականության մաս է: Իշխանությունները փորձում են մեկուսացնել այն մարդկանց, որոնք կարող են խոչընդոտել իրենց հետագա քայլերին: Իսկ առաջիկայում, իմ համոզմամբ, Հայաստանը կանգնած է նոր լուրջ մարտահրավերների առաջ:

- Երկար ձգձգումներից հետո տեղի ունեցավ Նիկոլ Փաշինյանի եւ Վլադիմիր Պուտինի հանդիպումը: Հետեւե՞լ եք հանդիպմանը եւ ի՞նչ տպավորություն ստացաք:

- Շատ մանրամասն չեմ հասցրել հետեւել, բայց այն, ինչին ծանոթացել եմ, ինձ բավականին մտորելու տեղիք է տվել: Ինձ մոտ բազմաթիվ հարցեր են առաջացել:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՈՎՔԵ՞Ր ԿԼՔԵՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Ազգային ժողովում կադրային փոփոխություններն ու աշխատանքից ազատումները շարունակվում են:

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ ԱԺ նախագահի Ռուբեն Ռուբինյանի որոշմամբ առաջիկայում աշխատանքից կարող են ազատվել նաեւ այն աշխատակիցները, որոնք նախկինում աշխատել են ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հետ:

Մասնավորապես, մեր տեղեկություններով՝ Ռուբինյանի որոշման աշխատանքից ազատվել է Լուսինե Բաբաջանյանն ու Տիգրան Հակոբյանը, որոնք խորհրդարանում զբաղեցրել են օգնականի պաշտոններ:

Այսպիսով, խորհրդարանում Ռուբինյանի ղեկավարության օրոք շարունակվում է այն գործընթացը, որը մեկնարկել էր նրա՝ ԱԺ նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո: Ըստ մեր աղբյուրների՝ Ռուբինյանը խորհրդարանի ղեկավարությունը ստանձնելուց հետո աստիճանաբար հեռացրել է Ալեն Սիմոնյանի թիմի հետ կապ ունեցող մի շարք աշխատակիցների՝ նրանց փոխարեն նշանակելով իր վստահությունը վայելող անձանց:

Ս. Գ.

ԱԶԱՏՎԵԼ Է ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

ԿԳՄՍ նախարարի մամուլի խոսնակ Նելլի Վահանյանը ազատվել է աշխատանքից, այս մասին Վահանյանը հայտնել է իր ֆեյսբուքյան էջում:

«Տեղեկացնում եմ, որ այսօրվանից դադարեցնում եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարի մամուլի քարտուղարի պարտականություններս:

Այս երկու տարին ինձ համար իսկապես մեծ ու արժեքավոր դպրոց էր:

Այս ընթացքում հասցրինք մի շարք բաներ փոխել ու փորձել. իրագործեցինք նախարարության ռեբրենդինգը, ստեղծեցինք նոր վիդեոշարքեր ու ձեւաչափեր, վերանայեցինք հաղորդակցության որոշ մոտեցումներ եւ ավելի շատ փորձեցինք պատմել ոչ միայն այն մասին, թե ինչ է արվում, այլ նաեւ՝ ինչու է արվում:

Շատ գործեր, հանդիպումներ, ասուլիսներ, նկարահանումներ, երբեմն՝ շատ երկար օրեր: Մի խոսքով՝ երկու տարի, որի ընթացքում հաստատ ձանձրանալու ժամանակ չկար:

Տիկին Zhanna Andreasyan ջան, շնորհակալ եմ Ձեզ վստահության, ազատ աշխատելու հնարավորության, միշտ ուղիղ ու արդար լինելու եւ մարդկային ջերմ վերաբերմունքի համար: Ձեր կողքին աշխատելն ինձ համար իսկապես անսահման կարեւոր փորձ էր ու մեծագույն պատիվ:

Շնորհակալ եմ իմ սիրելի վարչությանը: Մենք միասին շատ բան ենք անցել. լավ օրեր, լարված օրեր, հաջողված ու ոչ այնքան հաջողված փորձեր: Բայց շատ կարեւոր է, որ այդ ընթացքում դարձել էինք մի հրաշալի թիմ :

Հատկապես ուրախ եմ, որ փուլի ավարտին կարող եմ ասել՝ աշխատանքից բացի այստեղ գտել եմ նաեւ մարդկանց, որոնց հետ կապը, վստահ եմ, աշխատանքային հարաբերություններով չի ավարտվելու:

Սրտումս մի մեծ շնորհակալություն կա բոլորին»:

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔՈՎ Է ՀԵՌԱՆՈՒՄ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Մարտիրոսյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Արթուր Մարտիրոսյանը ԿԳՄՍ նախարարի տեղակալի պաշտոնին նշանակվել էր 2020 թվականի փետրվարի 12-ին: Պաշտոնից հեռանալու ֆոնին ArmLur.am-ը ներկայացնում է, թե ինչ ունեցվածք եւ ֆինանսական միջոցներ է հայտարարագրել Արթուր Մարտիրոսյանը 2025 թվականի համար:

Մարտիրոսյանը 2025 թվականին աշխատանքի վարձատրության եւ դրան հավասարեցված վճարումների տեսքով ստացել է 18 մլն 826 հազար 947 դրամ: Բացի այդ, նա ստացել է 1 մլն 895 հազար 217 դրամ եկամտային հարկի վերադարձ, 459 հազար 521 դրամ՝ բանկային ավանդների կամ տրված փոխառությունների դիմաց տոկոսների տեսքով, ինչպես նաեւ 1 մլն 500 հազար դրամ ստացված փոխառություն: Ընդհանուր հայտարարագրված եկամուտը կազմել է 22 մլն 681 հազար 685 դրամ:

2025 թվականին Արթուր Մարտիրոսյանը նաեւ 34 մլն 247 հազար դրամով բնակարան է ձեռք բերել Երեւանում: Գույքը գնվել է ապրիլի 2-ին՝ «Արկադա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ից, եւ տարեվերջին գտնվել է նրա միանձնյա սեփականության ներքո:

Բացի նոր ձեռք բերած բնակարանից, նրա անունով տարեվերջին առկա է եղել 2010 թվականին գնված եւս մեկ բնակարան՝ համատեղ սեփականության իրավունքով: Մարտիրոսյանը նաեւ ունի Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Լճկաձոր գյուղում գտնվող անհատական բնակելի տուն, որը 2023 թվականին ստացել է նվիրատվության եղանակով:

Նրա հայտարարագրում առկա է նաեւ 2010 թվականի արտադրության Toyota մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերվել 2018 թվականին:

Ֆինանսական միջոցների մասով տարվա ընթացքում փոփոխություններ են եղել: Մասնավորապես, բանկային ավանդներից մեկում տարեվերջին առկա է եղել 2 մլն 500 հազար դրամ, իսկ դոլարային ավանդը 9 հազար 700 դոլարից հասել է 12 հազար 800 դոլարի:

Բանկային հաշիվների երկու մնացորդները տարվա սկզբի համեմատ եւս ավելացել են: Տարեվերջին դրանցում առկա է եղել համապատասխանաբար 7 մլն 553 հազար 849 դրամ եւ 1 մլն 626 հազար 589 դրամ: Մարտիրոսյանը հայտարարագրել է նաեւ 8 մլն դրամ կանխիկ գումար, որը տարվա ընթացքում չի փոխվել: Միեւնույն ժամանակ, պաշտոնյան 3 մլն 543 հազար 710 դրամ ծախսել է վարկի մարման, իսկ 5 մլն դրամ՝ անշարժ գույքի վերանորոգման համար: Տարեվերջի դրությամբ նրա վարկի մայր գումարի մնացորդը կազմել է 16 մլն 957 հազար 85 դրամ:

Այսպիսով, Արթուր Մարտիրոսյանը պաշտոնից հեռանում է 2025 թվականի հայտարարագրում ներկայացված տվյալներով՝ 22.7 մլն դրամ տարեկան եկամուտով, 34.2 մլն դրամով ձեռք բերված նոր բնակարանով, եւս երկու անշարժ գույքով, Toyota ավտոմեքենայով, 8 մլն դրամ կանխիկ գումարով, բանկային հաշիվներում ավելի քան 9 մլն դրամով եւ 12.8 հազար դոլարի ավանդով:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՊԱՍՈՒՄ ԵՆ

ArmLur.am-ի բացառիկ տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանն ու վարչապետի աշխատակազմի ղեկավար Լիլիթ Մակունցը այս օրերին ակտիվորեն զբաղված են կառավարության վերջնական կազմավորման աշխատանքներով, մասնավորապես՝ փոխնախարարների թեկնածուների ընտրությամբ: Հիշեցնենք, որ նոր կառավարության ձեւավորման գործընթացը դեռ ամբողջությամբ ավարտված չէ, իսկ սեպտեմբերի 3-ը սահմանված ժամկետի վերջին օրն է: Այս ֆոնին իշխանական կուլիսներում ակտիվ քննարկվում է, թե ովքեր են զբաղեցնելու նախարարների տեղակալների պաշտոնները: Մեր տեղեկություններով՝ Փաշինյանն ու Մակունցը որոշել են կառավարության համակարգում բավական լայնածավալ կադրային փոփոխություններ իրականացնել: Մասնավորապես, նախատեսվում է, որ փոխնախարարների զգալի մասը լինելու է նոր եւ երիտասարդ կադրերից, որոնք մինչ այս կառավարության կազմում պաշտոններ չեն զբաղեցրել: Իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ խոսքը հիմնականում նոր թիմի ներկայացուցիչների մասին է, որոնք տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում կրթություն են ստացել: Ըստ մեր աղբյուրների՝ նոր փոխնախարարների շարքում զգալի տեղ կարող են զբաղեցնել «Ի գործ» ծրագրի ներկայացուցիչները: Իշխանության ներսում նրանց դիտարկում են որպես երիտասարդ, նոր կադրերի, որոնք պետք է համալրեն պետական կառավարման համակարգը: Այս գործընթացի առաջին օրինակներից մեկը, ըստ մեր տեղեկությունների, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության նոր փոխնախարարի թեկնածությունն է: Ինչպես ավելի վաղ գրել էր «ԱրմԼուր»-ը, Արմեն Սիմոնյանի պաշտոնից ազատումից հետո քննարկվում էր Դավիթ Իվանյանի թեկնածությունը: Այսպիսով, այս պահին գրեթե բոլոր նախարարություններում սրտատրոփ սպասում են նոր երիտասարդներին, ովքեր պետք է զբաղեցնեն փոխնախարարների եւ թափուր պաշտոններում առկա տեղերը:

Ս. Գ.

ԱՐՏԱՀԱՆՎԵԼ Է

ԱՄԷ արտահանվել է 60 տոննա հայկական ձուկ եւ ձկնամթերք: Այս մասին հայտնում են ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից:

«Հարգելի՛ տնտեսավարողներ,

Տեղեկացնում ենք, որ Արաբական Միացյալ Էմիրություններ (ԱՄԷ) է արտահանվել 60 տոննա ձուկ եւ ձկնամթերք: Հաշվի առնելով այդ երկրի շուկայում առկա մեծ պահանջարկը՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը կապահովի ձկնաբուծությամբ եւ արտահանմամբ զբաղվող բոլոր շահագրգիռ ընկերությունների կապը ԱՄԷ արտահանող կազմակերպության հետ՝ հետագա համագործակցության համար: Պահանջվող խմբաքանակներն են՝ իշխան ձուկ, քաշը 4 կգ եւ ավելի, որը կհամապատասխանի անվտանգության սահմանված պահանջներին: Եթե ձեր ընկերությունն ունի նշված քաշի խմբաքանակները եւ պատրաստ է համագործակցել արտահանող կազմակերպության հետ, առաջարկում ենք կապ հաստատել Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ (Կոնտակտային անձ՝ Արթուր Մամիկոնյան, էլ. հասցե՝ artur.mamikonyan@ssfs.am, հեռ՝ 015404040-220)»:

ԻՆՉ ՈՐՈՇԵՑԻՆ

Ի՞ՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ ՊՈՒՏԻՆՆ ՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ

Փաշինյանն ու Պուտինը Բիշքեկում քննարկել են հայ-ռուսական հարաբերությունները, ԵՄ-ի ու ԵԱՏՄ-ի հարցը:



Բիշքեկում սեպտեմբերի 1-ին տեղի ունեցած հանդիպման ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը քննարկել են հայ-ռուսական հարաբերությունների հետագա զարգացումը, տնտեսական համագործակցությունը, Հայաստանի՝ Եվրամիությանն անդամակցության գործընթացը եւ ԵԱՏՄ-ում Հայաստանի հետագա մասնակցության հարցը:

Հանդիպման սկզբում Վլադիմիր Պուտինը նշել է, որ Ռուսաստանը հանդես է գալիս Հայաստանի հետ բարեկամական, փոխշահավետ հարաբերությունների զարգացման օգտին՝ռազմավարական գործընկերության եւ դաշնակցային հարաբերությունների սկզբունքների հիման վրա:

Նրա խոսքով՝ Ռուսաստանը Հայաստանի հիմնական առեւտրատնտեսական գործընկերն է՝ շուրջ 30 տոկոս մասնաբաժնով, իսկ այս տարվա առաջին կիսամյակում երկու երկրների ապրանքաշրջանառությունը կազմել է 2,5 մլրդ դոլար:

Պուտինը հատուկ անդրադարձել է Հայաստանի՝ Եվրամիությանն անդամակցության հայտարարված մտադրությանը: Նա ընդգծել է, որ Հայաստանը ինքնիշխան պետություն է, եւ հայ ժողովուրդն իրավունք ունի որոշելու երկրի զարգացման ուղղությունը:

Սակայն, ըստ նրա, ԵՄ-ին Հայաստանի ձգտումը կարող է խնդիրներ առաջացնել ԵԱՏՄ-ում Հայաստանի մասնակցության եւ գործող առեւտրատնտեսական կապերի համար:

Պուտինը նաեւ նշել է, որ անհրաժեշտ է հնարավորինս արագ հստակություն մտցնել Հայաստանի հետագա քաղաքական-տնտեսական ուղղության վերաբերյալ:

ՌԴ նախագահը նաեւ ներկայացրել է ԵԱՏՄ-ի հետ Հայաստանի տնտեսական կապերի վերաբերյալ իր գնահատականը: Նրա խոսքով՝ ԵԱՏՄ-ին ավելի քան տասը տարի մասնակցելու ընթացքում Հայաստանի ՀՆԱ-ն աճել է 10,6 մլրդ դոլարից մինչեւ 29,2 մլրդ դոլար, իսկ ԵԱՏՄ երկրներ արտահանումը աճել է տասն անգամ:

Նիկոլ Փաշինյանն իր հերթին ընդգծել է, որ Հայաստանը շահագրգռված է Ռուսաստանի հետ հարաբերությունների հետագա զարգացման եւ խորացման մեջ:

Միաժամանակ վարչապետը նշել է, որ վերջին տարիներին տարածաշրջանում իրավիճակը փոխվել է, եւ Հայաստանի ու Ռուսաստանի հարաբերություններին անհրաժեշտ է նայել «թարմ հայացքով»՝ հաշվի առնելով, որ տարածաշրջանում այժմ խաղաղություն է հաստատվել:

ԵՄ-ին անդամակցության գործընթացի վերաբերյալ Փաշինյանը նշել է, որ Հայաստանը նախորդ տարի ընդունել է ԵՄ-ին անդամակցության գործընթացի մեկնարկի մասին օրենքը, սակայն Հայաստանի եւ Ռուսաստանի, ինչպես նաեւ ԵԱՏՄ շրջանակներում գործող պայմանագրերի ուսումնասիրության արդյունքում որեւէ խախտում չի արձանագրվել:

Վարչապետի խոսքով՝ այս պահին Հայաստանը Ռուսաստանին եւ ԵԱՏՄ գործընկերներին չի տեղեկացրել միությունից դուրս գալու մտադրության մասին:Փաշինյանը նաեւ ընդգծել է, որ ԵՄ-ի ուղղությամբ գործընթացը չի նշանակում Ռուսաստանի կամ ԵԱՏՄ-ի դեմ ուղղված քայլ:

Նրա խոսքով՝Հայաստանի համար կարեւոր է ունենալ այլընտրանքներ, հատկապես բազմաբեւեռ աշխարհակարգի ձեւավորման պայմաններում, եւ միաժամանակ պահպանել Ռուսաստանի հետ հարաբերությունների բարձր մակարդակը: Այս հարցում, սակայն, Փաշինյանի եւ Պուտինի դիրքորոշումները ամբողջությամբ չեն համընկել:

Պուտինը նշել է, որ ԵՄ-ին անդամակցության գործընթացի մեկնարկի մասին օրենքի ընդունումն, իր գնահատմամբ, ըստ էության, նշանակում է ԵԱՏՄ-ից դուրս գալու մասին հայտարարություն, քանի որ երկու տնտեսական կազմակերպություններին միաժամանակ անդամակցելը անհամատեղելի է: Փաշինյանն էլ հակադարձել է, որ Հայաստանը հասկանում է՝ ժամանակի ընթացքում կարող է անհրաժեշտ լինել հստակ ընտրություն կատարել, սակայն այդ պահը, իր գնահատմամբ, դեռ չի հասունացել: Վարչապետը նշել է, որ այս պահին իրական այլընտրանքը դեռ ձեւավորված չէ, իսկ դրա ստեղծման դեպքում Հայաստանը ընտրություն կկատարի՝ հանրաքվեի միջոցով կամ առանց հանրաքվեի:

Պուտինը, իր հերթին, նշել է, որ եթե խոսքը ժողովրդի ընտրության հնարավորության մասին է, ապա այդ հնարավորությունը պետք է ստեղծել եւ հարցը լուծել՝ քաղաքացիներին ուղղակիորեն դիմելով:

Այսպիսով, Փաշինյան-Պուտին հանդիպման առանցքային թեմաներից մեկը դարձավ Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշման հարցը:

Կողմերը միաժամանակ վերահաստատեցին հայ-ռուսական հարաբերությունները զարգացնելու շահագրգռվածությունը, սակայն ԵՄ-ի հետ Հայաստանի հարաբերությունների խորացման եւ ԵԱՏՄ-ում հետագա մասնակցության հարցում նրանց մոտեցումների միջեւ պահպանվեց էական տարբերություն:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՀԵՍՏ Է ՊԱՅԹԵԼ

Ադրբեջանի Գերանբոյի շրջանում սեպտեմբերի 2-ի գիշերը զինամթերքի պահեստում պայթյուն է տեղի ունեցել, որին հաջորդել է հրդեհը:

Ադրբեջանական APA գործակալության փոխանցմամբ՝ Գերանբոյի շրջանի Նիզամի գյուղի մերձակայքում գտնվող պահեստում տեղի ունեցած պայթյունի մասին համատեղ հայտարարություն են տարածել Ադրբեջանի արտակարգ իրավիճակների, պաշտպանության եւ ներքին գործերի նախարարությունները:

Հաղորդագրության համաձայն՝ դեպքից անմիջապես հետո համապատասխան ուժերը ձեռնարկել են անհրաժեշտ միջոցառումներ, իսկ իրավիճակը վերցվել է վերահսկողության տակ: Անվտանգության նկատառումներով դեպքի վայրի հարակից տարածքից քաղաքացիները տարհանվել են:

Ադրբեջանի իշխանությունների փոխանցմամբ՝ պայթյունի եւ դրան հաջորդած հրդեհի հետեւանքով տուժածներ չկան:

Ա. Վ.

ԱՋԱՏԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՇՈՒՐՋ 80%-Ը

ԵՄ Խորհուրդը քիչ առաջ հավանություն տվեց օրենսդրական նախաձեռնությանը, որով նախատեսվում է երկու տարով ժամանակավորապես կասեցնել մաքսատուրքերը հայկական ապրանքների լայն շրջանակի համար եւ ազատականացնել Հայաստանից ԵՄ արտահանման շուրջ 80%-ը:

Այս մասին հայտնում է Fačtor TV-ի թղթակիցը Բրյուսելից:

Արտոնյալ ռեժիմը կգործի մի շարք պայմաններով. Հայաստանը պետք է պահպանի ապրանքների ծագման կանոնները, ԵՄ ներմուծման նկատմամբ նոր սահմանափակումներ չկիրառի եւ հարգի ԵՄ-Հայաստան համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի հիմնարար սկզբունքները՝ ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունն ու մարդու իրավունքները: Առաջարկը դեռ պետք է պաշտոնապես հաստատի Եվրոպական խորհրդարանն առաջիկա իր նիստում, որից հետո կանոնակարգը կընդունվի եւ ուժի մեջ կմտնի ԵՄ Պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում ավարտվել է ՀՀ ՊՆ նախկին նախարարի կողմից բնակարանների հատկացման գործընթացում պաշտոնական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ քրեական վարույթի նախաքննությունը:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Ս.Օ.-ն զբաղեցնելով ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը, ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական բնակարանային հանձնաժողովի անդամների օժանդակությամբ, անցել է իր պաշտոնեական լիազորությունները՝ էական վնաս պատճառելով մի շարք անձանց իրավունքներին եւ օրինական շահերին:

Մասնավորապես՝ 2008 թվականի հուլիսի 12-ին ՀՀ պաշտպանության նախարարության վարչական ապարատի ներքին անվտանգության բաժնի պետ Մ.Հ.-ն իր ընտանիքին բնակարան տրամադրելու խնդրանքով զեկուցագիր է ներկայացրել ՀՀ ՊՆ վարչական ապարատի ղեկավարին, ինչի արդյունքում ընդգրկվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների բնակարանային հաշվառման գործընթացում:

Բացի այդ, Մ.Հ.-ն հուլիսի 17-ին նույնաբովանակ զեկուցագիր է ներկայացրել նաեւ ՀՀ պաշտպանության նախարար Ս.Օ.-ին, որում, բացի բնակարան տրամադրելու խնդրանքից, նշել է՝ իրեն արտահերթ կերպով Երեւան քաղաքում բնակարանով ապահովելու ցանկության մասին:

Նույն օրը, ՀՀ պաշտպանության նախարար Ս.Օ.-ն, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 07-ի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների բնակարանային հաշվառման եւ բնակարանները զինծառայողներին տրամադրելու գործընթացների իրականացումը բացառապես հանձնաժողովին վերապահված լինելու պայմաններում, ինչպես նաեւ նույն կարգի համաձայն չունենալով տվյալ գործընթացներին միջամտելու որեւէ լիազորություն, իր հետ բարեկամական կապերի մեջ գտնվող Մ.Հ.-ի խնդրանքին ընդառաջելու շարժառիթով, հանձնաժողովին հանձնարարել է վերջինիս արտահերթ տրամադրել բնակարան:

2008 թվականի օգոստոսի 11-ին կայացած հանձնաժողովի նիստի ընթացքում, հանձնաժողովի նախագահը եւ հանձնաժողովի անդամները Մ.Հ.-ին ներառել են բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների բնակարանային հաշվառման ցանկում, ապա անմիջապես՝ նույն նիստի ընթացքում, քվեարկությամբ որոշել են վերջինիս արտահերթ կերպով հատկացնել Երեւան քաղաքում գտնվող երեք սենյակից բաղկացած բնակարան:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի բնակարանային պայմանների բարելավման իրական կարիք ունեցող շահառուները տարիներ շարունակ ընդգրկված եւ հերթագրված լինելով բնակարանային հաշվառման ցուցակներում՝ զրկվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրենց սոցիալական պաշտպանության ապահովման՝ անհատույց օգտագործման իրավունքով բնակարաններ ձեռք բերելու օրինական եւ օրենքով երաշխավորված իրավունքից, ինչի հետեւանքով էական վնաս է պատճառվել հիշյալ անձանց իրավունքներին եւ օրինական շահերին:

Ս.Օ.-ի նկատմամբ հսկող դատախազի որոշմամբ հարուցվել է հանրային Քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը):

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԳՈՐԾԸ ՄԱԿԱԳՐՎԵՑ Վ. ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

Կաթողիկոսը մեղադրվում է դատական ակտի կատարմանը խոչընդոտելու համար մի գործով, որով մեղադրվել են նաեւ եկեղեցու վեց բարձրաստիճան հոգեւորականներ:

Այս գործը վերաբերում է վարչապետի հակակաթողիկոսական արշավին միացած 10 եպիսկոպոսներից Գեւորգ սրբազանին: Կաթողիկոսը պաշտոնանկ էր արել նրան, իսկ դատարանը պարտավորեցրել էր վերականգնել հոգեւորականին իր պաշտոնում:

Մայր Աթոռը, սակայն, չվերականգնեց նրան ու կարգալույծ արեց՝ հայտարարելով, որ այս հարցերը դատարանի տիրույթում չեն, եւ սա միջամտություն է եկեղեցու ինքնավարությանը:

Քննչականը սա համարեց դատական ակտի կատարմանը խոչընդոտում:

Փաստացի, դատավոր Վահագն Մելիքյանը երրորդ դատավորն է, որին մակագրվել է քրեական գործը:

Ք. Մ.

ՉՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵՆ ԵՎ ԱՋԱԿՑԵՆ

Գագիկ Ծառուկյանը Կենտրոն ՔԿՀ-ից գրում է. «Տեղեկացա, որ Հայաստանի եւ սփյուռքի տարբեր ոլորտների մոտ վեց տասնյակ հեղինակավոր գործիչներ հանդես են եկել «Գագիկ Ծառուկյանի պաշտպանության հանրային կոմիտե» ստեղծելու նախաձեռնությամբ: Շնորհակալ եմ բոլորին: Դժվար է մի քանի բառով նկարագրել անկեղծ մարդկային զգացմունքներս եւ երախտագիտությունս Ձեր հանդեպ: Ուղղակի կարող եմ ասել՝ երբեք սա չեմ մոռանա: Միաժամանակ ուզում եմ դիմել Ձեզ մի խնդրանքով, առաջարկով, հորդորով՝ այս կոմիտեի աշխատանքները չսահմանափակել միայն իմ իրավունքների պաշտպանությամբ: Իմ խնդրանքն է, որ աջակից եւ պաշտպան լինեք այսօր Հայաստանում քաղաքական հետապնդումների ենթարկվող բոլոր մեր քաղաքացիներին: Մեկտեղեք Ձեր ջանքերը՝ պայքարելու Բաքվում պահվող հայորդիների ազատ արձակման համար:

Ձեր գործունեությամբ նպաստեք երկրում արդարության եւ ներքին համերաշխության հաստատմանը: Մարդու իրավունքների եւ արդարության համար պայքարը պահանջում է լուրջ ջանքեր եւ համատեղ աշխատանք: Սա մեկ կամ մի քանի մարդու ազատության խնդիրը չէ:

Մեր երկիրը իր քաղաքացիների համար պետք է արդարություն, անվտանգություն եւ պաշտպանություն ապահովի նախ երկրի ներսում, որպեսզի կարողանա պաշտպանել նրանց արտաքին վտանգներից:

Ձեր հեղինակությունը, մարդկային որակները, սկզբունքայնությունը եւ համատեղ ջանքը շատ բան կարող են փոխել դեպի դրականը:

Եւս մեկ անգամ՝ շնորհակալություն»:

ԼՈՒՐԵՐ

ԱՆԿՈՂՆՈՒՑ՝ ԲԱՆՏ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանը 2 ամսով կալանավորվել է: Ավելի վաղ հայտնել էինք, որ առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու եւ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում անհետաձգելի քննչական եւ վարութային գործողություններ են իրականացվել ՀՀ ՊԵԿ նախկին նախագահ Գ. Խ.-ի, վերջինիս որդու բնակարաններում, ինչպես նաեւ նրանց հետ փոխկապակցված շուրջ 21 ընկերությունների գրասենյակներում եւ մասնաճյուղերում:

Գագիկ Խաչատրյանը ձերբակալվել էր եւ կալանքի միջնորդություն էր ներկայացվել: Քրեական վարույթներից բացի՝ Հակակոռուպցիոն դատարանում քննվող, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերի շրջանակում ՀՀ ֆինանսների նախկին նախարար Գ. Խ.-ից եւ նրան փոխկապակցված անձանցից, այդ թվում՝ որդիներից, պահանջվում է բռնագանձել 193 անշարժ գույք, որը, ի թիվս այլնի, ներառում է 46 բնակարան Կենտրոն վարչական շրջանում, 89 անշարժ գույք Կոտայքի մարզում, 29 իրավաբանական անձում մասնակցություն, որոնց թվում են «ՄԵԳԱՍՊՈՐՏ» ՍՊԸ-ն, «ՄԵԳԱ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն, 14 շարժական գույք, շուրջ 1 միլիարդ 451 միլիոն ԱՄՆ դոլարի չափով ձեռք բերված պարտատոմսեր, շուրջ 147 հազար ԱՄՆ դոլար ավանդ, շուրջ 23 միլիոն 81 հազար ԱՄՆ դոլարի, 409 միլիոն 806 հազար ՀՀ դրամի եւ 9750 եվրոյի չափով փոխառության պահանջի իրավունք, շուրջ 17 միլիարդ 761,5 միլիոն դրամ:

Ս. Գ.

ՄԵԹԱՄՖԵՏԱՄԻՆ ՈՒ ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները հերթական օպերատիվ տեղեկությունն իրացնելիս համագործակցեցին Կոտայքի մարզի քրեական ոստիկանների հետ:

Օգոստոսի 27-ին՝ ժամը 13-ին, թմրամիջոց ձեռք բերելու եւ իրացնելու կասկածանքով Բյուրեղավանում ձերբակալվեց նույն քաղաքի բնակիչ 29-ամյա մի կին:

Աբովյանի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ, որի շրջանակում դատարանի որոշմամբ օգոստոսի 29-ին խուզարկություն կատարվեց 29-ամյա կնոջ բնակարանում:

Հայտնաբերվեց կպչուն ժապավենով փաթեթավորված 38 փաթեթ՝ ընդհանուր 38 գրամ մեթամֆետամինի նմանվող բյուրեղանման զանգվածով, 52 գրամ նույն զանգվածով լցված տոպրակ եւ ընդհանուր 118 գրամ քաշով մարիխուանայի 57 փաթեթ:

29-ամյա կինը ձերբակալվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Օգոստոսի 24-ից 31-ը մայրաքաղաքում տարբեր կասկածանքներով ձերբակալվել ու համայնքային ոստիկանության բաժիններ է տարվել 115 անձ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԱՄԱՌԱՆՈՑՆԵՐ ԵՆ ՍԱՐՔԵԼ

Իջեւան համայնքի սահմանամերձ Այգեհովիտ գյուղի բնակչուհին, ով 5 երեխաների մայր է, ասաց, որ իրենք տուն չունեն, սակայն վարկային վատ պատմություն ունենալու պատճառով չեն կարողացել օգտվել պետական վարկային աջակցությամբ 16 միլիոն դրամով առանձնատուն կառուցելու ծրագրից: Մինչդեռ այդ ծրագրով Հայաստանի բանկերի աշխատողներ, որոնք Տավուշի սահմանագոտու բնակիչներ չեն, մարզի սահմանագոտում տներ, իրենց համար ամառանոցներ են կառուցել:

Նիկոլ Փաշինյանն ու մեծ պաշտոնյաները հպարտանում են բնակարանային ապահովման պետական ծրագրի արդյունքներով, սակայն այդ արդյունքները հպարտանալու տեղի՞ք են տալիս: Մայիսի 30-ին՝ նախընտրական քարոզարշավի ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը Իջեւանի սահմանամերձ Սեւքար գյուղում հայտարարեց, որ Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում 16 միլիոնի ծրագրով կառուցվում է 1931 տուն: Իսկ 4 բնակավայրում՝ Տավուշի սահմանամերձ Կիրանց, Բաղանիս, Ոսկեպար, Բերքաբեր գյուղերում բնակարանային ապահովման պետական ծրագրով առանձնատների կառուցման համար վարկավորմամբ տրվում է 21 միլիոնական դրամ:

Օգոստոսի 5-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Սահմանամերձ բնակավայրերում բնակարանային ապահովման պետական ծրագրով օգոստոսի 6-ի դրությամբ քանի՞ առանձնատան կառուցման համար վարկավորում է իրականացվել, քանիսի՞ շինարարության ավարտական ակտն առկա է: Խնդրում եմ այդ տվյալները գրել ըստ մարզի բնակավայրերի: Այդ ծրագրով կառուցված քանի՞ առանձնատուն է օգոստոսի 6-ի դրությամբ փաստացի բնակեցված, ո՞ր բնակավայրում՝ քանի տուն»: Մարզպետի աշխատակազմից ոչ լիարժեք պատասխան են տվել. «ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում բնակարանային ապահովման պետական ծրագրով, օգոստոսի 6-ի դրությամբ, ըստ Իջեւանի, Բերդի եւ Նոյեմբերյանի համայնքապետարանների տված տեղեկատվության, փաստացի բնակեցված է 128 տուն, իսկ կառուցման համար վարկավորման իրականացման եւ շինարարության ավարտական ակտի հետ կապված՝ առաջարկում ենք դիմել պետական լիազոր մարմին»:

Մարզպետի աշխատակազմը պարտավոր էր լրագրողիս հայտնել, թե այդ խնդրով որն է պետական լիազոր մարմինը: Տավուշում բնակարանային ապահովման պետական ծրագրով կառուցված եւ կառուցվող գրեթե 2000 առանձնատներից միայն 128-ն է բնակեցված: Պետական աջակցությամբ, վարկային ծրագրով սահմանագոտում կառուցված շատ տներ կառուցել են ոչ սահմանագոտում բնակվողները, այլ ուրիշ բնակավայրերում ապրողները, ովքեր այդ տները որպես ամառանոց են սարքել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ ՈՒՆԻ

Ո՞Վ Է ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց ֆինանսական թափանցիկության ուսումնասիրության շրջանակում «Ժողովուրդ» օրաթերթը այս անգամ անդրադարձել է փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական Արմեն Հայրապետյանին՝ փորձելով հասկանալ, թե ինչ ճանապարհ է անցել նա մինչեւ այս պաշտոնը եւ ինչ ունի:

Ո՞վ է Արմեն Հայրապետյանը

Արմեն Հայրապետյանը ծնվել է 1970 թվականի հուլիսի 12-ին Շիրակի մարզի Արթիկ քաղաքում: 1992 թվականին ավարտել է Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը:

Նրա աշխատանքային գործունեությունը հիմնականում կապված է եղել ֆինանսական եւ տնտեսական ոլորտի պետական կառավարման հետ: 1994-1998 թվականներին աշխատել է «Հայխնայբանկի» Արարատի բաժանմունքի վարկային բաժնում՝ որպես ավագ տնտեսագետ:

1998 թվականին տեղափոխվել է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն, որտեղ զբաղեցրել է պետական բյուջեի եկամուտների քաղաքականության գլխավոր վարչության պետական տուրքերի եւ ոչ հարկային եկամուտների քաղաքականության բաժնի պետի պաշտոնը: 1999-2000 թվականներին եղել է ՀՀ ֆինանսների նախարարության պետական տուրքերի եւ ոչ հարկային եկամուտների քաղաքականության վարչության պետ:

2000-2002 թվականներին շարունակել է աշխատել ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունում՝ որպես պետական եկամուտների քաղաքականության գլխավոր վարչության համապատասխան վարչության պետ:

2002-2008 թվականներին ղեկավարել է նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչությունը: Նույն պաշտոնը զբաղեցրել է նաեւ 2008-2014 թվականներին՝ արդեն ՀՀ ֆինանսների նախարարությունում:

2014 թվականին նշանակվել է ֆինանսների նախարարի տեղակալ: 2014-2015 թվականներին եղել է մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար, իսկ 2015-2016 թվականներին՝ վարչության պետ:

2016-2023 թվականներին Արմեն Հայրապետյանը զբաղեցրել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի պաշտոնը: 2023 թվականի հունվար-փետրվար ամիսներին եղել է ֆինանսների նախարարի խորհրդական:

Նույն թվականի ընթացքում նա նշանակվել է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար եւ այդ պաշտոնը զբաղեցրել է մինչեւ 2024 թվականը:

2024 թվականի դեկտեմբերի 2-ին Արմեն Հայրապետյանը նշանակվել է փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական:

Ունեցվածքը

Հայտարարագրի համաձայն՝ 2025 թվականի սկզբում նա ունեցել է երկու անշարժ գույք: Դրանցից մեկը Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում գտնվող անհատական բնակելի տուն է՝ հողամասով եւ տնտեսական շինություններով: Գույքը ձեռք է բերել 2006 թվականի ապրիլի 21-ին:

Մյուսը Երեւանի Արաբկիր վարչական շրջանում գտնվող բնակարանն է, որը ձեռք է բերել 2021 թվականի դեկտեմբերի 3-ին:

2025 թվականի ընթացքում նա նոր անշարժ գույք չի ձեռք բերել եւ առկա գույքերից որեւէ մեկը չի օտարել:

Տրանսպորտային միջոցներից Հայրապետյանը հայտարարագրել է 2013 թվականի արտադրության Lexus ավտոմեքենա: Այն ձեռք է բերել 2020 թվականի մարտի 21-ին: 2025 թվականին մեքենայի հետ կապված փոփոխություն չի եղել:

Կանխիկը նվազել է 5 մլն դրամով

Կանխիկ դրամի մասով Արմեն Հայրապետյանը 2025 թվականի սկզբում հայտարարագրել է 12 մլն 530 հազար դրամ, իսկ տարեվերջին՝ 7 մլն 530 հազար դրամ:

Այսինքն՝ տարվա ընթացքում նրա հայտարարագրած կանխիկ միջոցները նվազել են 5 մլն դրամով:

Ավելի քան 18 մլն դրամ եկամուտ

2025 թվականին Արմեն Հայրապետյանի հայտարարագրած ընդհանուր եկամուտը կազմել է 18 մլն 148 հազար 643 դրամ:

Դրանից 15 մլն 644 հազար 932 դրամը աշխատանքի վարձատրություն եւ դրան հավասարեցված այլ վճարումներ են՝ վարչապետի աշխատակազմից:

Եվս 2 մլն 503 հազար 711 դրամը կազմել է եկամտային հարկի վերադարձը:

Հայտարարագրում առկա է նաեւ 23 մլն 88 հազար 735 դրամի վարկի մայր գումարի մնացորդ: Վարկը ներկայացված է որպես բնակարանի հետ կապված վարկ:

Ծախսերի մասով Արմեն Հայրապետյանը հայտարարագրել է 2 մլն 503 հազար 711 դրամի ուսման կամ այլ դասընթացների համար կատարված ծախս:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՐՎ Է ՆԱԽԱՐԱՐԻ ՆՈՐ ՏԵՂԱԿԱԼԸ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ Քրիստինա Թաթարյանը նշանակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալի պաշտոնում:

Նորանշանակ փոխնախարարն ունի միջազգային, մասնավոր եւ հանրային ոլորտներում աշխատանքի փորձ, իսկ բարձրագույն կրթությունը ստացել է Մեծ Բրիտանիայում:

Քրիստինա Թաթարյանը ծնվել է 1996 թվականին՝ Ուկրաինայի Կիեւ քաղաքում: Սովորել է Կիեւի թիվ 51 միջազգային հարաբերությունների լիցեյում:

2010-2014 թվականներին սովորել է Մեծ Բրիտանիայի «Դին Քլոուզ» դպրոցում: 2015-2018 թվականներին ուսումը շարունակել է Դարհեմի համալսարանում՝ ստանալով բակալավրի աստիճան անգլիական գրականություն մասնագիտությամբ:

2020-2021 թվականներին սովորել է Արեւելյան Անգլիայի համալսարանում եւ ստացել «Գրական թարգմանություն» մասնագիտությամբ մագիստրոսի աստիճան: Մագիստրոսական ուսումնառության ընթացքում ուսումնասիրել է Նարինե Աբգարյանի «Շարունակել ապրել» ժողովածուի թարգմանության ստեղծագործական եւ լեզվական շերտերը: Նա նաեւ հայերենից անգլերեն թարգմանել է Հովհաննես Թումանյանի «Գիքորը» պատմվածքը՝ այն ներկայացնելով դրամատիկական ադապտացիայի ձեւաչափով:

Թաթարյանի աշխատանքային գործունեությունը սկսվել է 2017 թվականին՝ «Ernst & Young» ընկերությունում:

2018-2019 թվականներին նա աշխատել է Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակում՝ որպես փորձագետ ներգրավվելով ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի եւ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի տարբեր նախագծերում:

2019-2020 թվականներին աշխատել է «Synergy International Systems» ընկերությունում՝ որպես թարգմանիչ: Այդ ընթացքում ներգրավված է եղել պետական կառույցների համար արդարադատության ոլորտի ծրագրային լուծումների մշակման եւ ներդրման նախագծում:

2021-2024 թվականներին Քրիստինա Թաթարյանը եղել է համաշխարհային գրականության թարգմանությամբ զբաղվող միջազգային «Asymptote Journal» հրատարակության Հայաստանի խմբագիրը:

2022-2026 թվականներին աշխատել է «Ա-Տրենդ» ընկերությունում՝ որպես գործադիր տնօրեն: Ընկերությունը զբաղվում է միջազգային բրենդների դիստրիբուցիայով եւ շուկայի զարգացմամբ:

Քրիստինա Թաթարյանը տիրապետում է մի քանի լեզուների՝ անգլերեն, ուկրաիներեն, ռուսերեն, ֆրանսերեն եւ իսպաներեն:

Նորանշանակ փոխնախարարը ամուսնացած է եւ ունի երեք երեխա:

Քրիստինա Թաթարյանի նշանակումը տեղի է ունենում այն գործընթացի շրջանակում, որի ընթացքում վարչապետ Նիկոլ Փաշինյանը կոչ էր արել աշխարհի առաջատար համալսարանների շրջանավարտներին դիմել եւ ընդգրկվել ՀՀ կառավարության կադրային բանկում: Փաշինյանը հունիսի 13-ին հայտարարել էր այդ նախաձեռնության մասին, իսկ օգոստոսի 4-ին հայտնել էր, որ արդեն ստացել են 1141 հայտ, որոնցից 459 թեկնածու կամ դիմորդների շուրջ 40 տոկոսը անցել է հաջորդ փուլ: Ավելի ուշ վարչապետը հայտնել էր, որ որոշ դիմումատուների պատրաստվում է նշանակել բարձր պաշտոններում:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Մարզերում օգոստոսի 24-ից 31-ը տարբեր կասկածանքով ձերբակալվել ու համայնքային ոստիկանության տարածքային բաժիններ է տարվել 38 անձ:*

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ԽԱՂԱՐԿՈՒՄ ԵՆ 5-ՕՐՅԱ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՓԱՐԻԶ

Ֆասթ Բանկն ու Mastercard միջազգային վճարային համակարգը համատեղ մեկնարկել են խաղարկություն, որի շրջանակում ֆիզիկական անձ հաճախորդները հնարավորություն ունեն շահել «5-օրյա ուղեւորություն դեպի Փարիզ երկուսի համար» մրցանակը:

Խաղարկությանը մասնակցելու համար Ֆասթ Բանկի հաճախորդներին անհրաժեշտ է ս.թ. օգոստոսի 15-ից մինչեւ նոյեմբերի 15-ը կատարել առցանց կամ ֆիզիկական առեւտուր արտերկրում՝ վճարելով Ֆասթ Բանկի Mastercard վճարահաշվարկային համակարգի Mastercard World կամ Mastercard World Elite քարտերով:

Յուրաքանչյուր հանրագումարային 50,000 ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի ծախսի դիմաց մասնակիցները կստանան 1 պրոմոկոդ: Յուրաքանչյուր քարտապան կարող է հավաքել առավելագույնը 10 պրոմոկոդ: Իսկ հավելյալ՝ 11-րդ պրոմոկոդը կստանան, եթե խաղարկության ընթացքում Ֆասթ Բանկից պատվիրեն եւս մեկ Mastercard World կամ Mastercard World Elite ԱկնՔարտ:

ՀՀ դրամով ԱկնՔարտերի դեպքում հաշվի կառնվի գործարքների ընդհանուր գումարը: Արտարժույթով քարտերի դեպքում գործարքների գումարը կհաշվարկվի ՀՀ դրամով՝ գործարքի հաշվեգրման օրվա ԿԲ փոխարժեքով:

Խաղարկության մասնակիցները պրոմոկոդերը կստանան իրենց էլեկտրոնային հասցեներին արշավի ավարտից հետո: Խաղարկությունն ամփոփվելու է Ֆասթ Բանկի YouTube-յան ալիքում՝ 2026 թվականի դեկտեմբերի 25-ին ժամը 15:00-ին: Հաղթողը կորոշվի պատահականության սկզբունքով՝ Pretty Random համակարգի միջոցով, որի ընթացքում կընտրվի հաճախորդներից մեկին տրամադրված գործող պրոմոկոդը:

Ճամփորդության փաթեթում ներառվում են երկկողմանի ավիատոմսերը Երեւան Փարիզ Երեւան ուղղությամբ՝ 2 անձի համար եւ 5 գիշեր կացություն Փարիզում գտնվող հյուրանոցում: Մանրամասներին ծանոթանալու համար անհրաժեշտ է անցնել հետեւյալ հղումով:

Ֆասթ Բանկը շարունակաբար ընդլայնում է իր ծառայությունների շրջանակը՝ առաջարկելով 24/7 արագ, հարմարավետ եւ անվտանգ ֆինանսական լուծումներ Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Բանկը վերահսկվում է

ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ՈՎ Է ՆՈՐ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ

ԳԻՏՆԱԿԱՆԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ սեպտեմբերի 2-ից ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ է նշանակվել Լեւոն Մովսիսյանը: Նորանշանակ փոխնախարարը մասնագիտությամբ դեղագետ է, գիտությունների դոկտորի կոչում է ստացել Օքսֆորդի համալսարանում եւ երկար տարիներ աշխատել է գիտության ու դեղագործության ոլորտներում՝ Հայաստանից դուրս:

Լեւոն Մովսիսյանը ծնվել է 1988 թվականի մարտի 8-ին՝ Բենիամին գյուղում: 2005-2010 թվականներին սովորել է Երեւանի պետական բժշկական համալսարանում եւ ստացել դեղագետի որակավորում: 2011-2014 թվականներին Օքսֆորդի համալսարանում ստացել է գիտությունների դոկտորի կոչում: Նրա հետազոտական հիմնական ուղղություններն են եղել սուպրամոլեկուլային քիմիան եւ ածխածնի նոր ալոտրոպ ձեւերը:

Մովսիսյանը մասնագիտական գործունեությունը հիմնականում ծավալել է գիտահետազոտական եւ դեղագործական ոլորտներում: 2014-2015 թվականներին աշխատել է Օքսֆորդի համալսարանում՝ որպես գիտաշխատող: Այդ ընթացքում ընտրվել է ծրագրի առաջատար գիտաշխատող եւ համակարգել է բրիտանական ու գերմանական չորս հեղինակավոր համալսարանների մասնակցությամբ միջազգային հետազոտական ցանցի աշխատանքը:

2016-2018 թվականներին աշխատել է Շվեյցարիայի դաշնային տեխնոլոգիական ինստիտուտում՝ որպես գիտաշխատող: Այստեղ զբաղվել է նոր դեղանյութերի հայտնաբերմանն ու մշակմանը վերաբերող հետազոտություններով, ինչպես նաեւ միջազգային կոնսորցիումի շրջանակում համակարգել ծրագրային աշխատանքները՝ համագործակցելով ակադեմիական խմբերի եւ «Ֆ. Հոֆման-Լա Ռոշ» ընկերության հետ:

2018-2020 թվականներին Մովսիսյանը գիտաշխատող է եղել Կանադայի Ալբերտայի համալսարանում: Այդ տարիներին ղեկավարել է նոր քիմիական լաբորատորիայի ստեղծումն ու գործարկումը, մասնակցել սարքավորումների գնահատման եւ գնման, անվտանգության ընթացակարգերի ու տվյալների որակի ստանդարտների ներդրման աշխատանքներին:

2021 թվականին նա աշխատել է ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգում՝ որպես խորհրդատու՝ ուսումնասիրելով ստարտափների տեխնիկական եւ գիտական հիմքերը եւ իրականացրել պատշաճ ուսումնասիրություններ՝ ներդրումային որոշումների կայացմանն աջակցելու նպատակով:

2021 թվականի նոյեմբերից մինչեւ 2022 թվականի հուլիսը եղել է ավագ գիտաշխատող Նիդերլանդներում, իսկ 2022-2024 թվականներին՝ ծրագրերի ղեկավար եւ ավագ գիտաշխատող: Այդ պաշտոնում պատասխանատու է եղել միջազգային դեղանյութերի հայտնաբերման ծրագրերի իրականացման համար, ղեկավարել որակի վերահսկման գործընթացների ավտոմատացման եւ թվայնացման աշխատանքները, ինչպես նաեւ բազմագործառութային թիմերի աշխատանքը:

2024 թվականի հոկտեմբերից մինչեւ 2025 թվականի հունվարը Մովսիսյանը Նիդերլանդներում աշխատել է որպես ծրագրի ղեկավար՝ զբաղվելով հետազոտությունների փաստաթղթային փաթեթների գնահատմամբ եւ դրանք միջազգային կարգավորող պահանջներին համապատասխանեցնելով:

Նրա կենսագրության մեջ առանձնահատուկ տեղ ունի նաեւ գիտական գործունեությունը: 2012-2020 թվականներին նա միջազգային գիտական ամսագրերի համար հանդես է եկել որպես փորձագետ-գնահատող, իսկ նույն ժամանակահատվածում ղեկավարել է շուրջ տասը ասպիրանտների, մագիստրատուրայի եւ բակալավրիատի ուսանողների գիտահետազոտական նախագծերը:

Մովսիսյանը մասնակցել է նաեւ ձեռնարկատիրական կրթական ծրագրերի: 2012-2013 թվականներին սովորել է Օքսֆորդի համալսարանի Սաիդի բիզնես դպրոցում՝ «Կառուցելով բիզնեսը» ծրագրում, իսկ 2017 թվականին Ցյուրիխում մասնակցել է ՍիԹիԱյ ձեռնարկատիրական վերապատրաստման ծրագրին:

Նա արժանացել է Օքսֆորդի Ռաֆֆի Մանուկյան կրթաթոշակի եւ «Լույս» հիմնադրամի կրթաթոշակի, ինչպես նաեւ Մենդելեեւյան միջազգային օլիմպիադայի բրոնզե մեդալի: Մովսիսյանը միջազգային գիտական տասը հոդվածների հեղինակ եւ համահեղինակ է:

Լեւոն Մովսիսյանը տիրապետում է անգլերեն եւ ռուսերեն լեզուներին: Նա ամուսնացած է եւ ունի երկու զավակ:

2026թ. սեպտեմբերի 2-ից Լեւոն Մովսիսյանը ստանձնել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի պաշտոնը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՆՈՐ ԱԿՑԻԱ

Յունիբանկը նոր ակցիա է մեկնարկել Arca «U-Teenager» քարտադանների համար, որի գլխավոր մրցանակը 1 500 000 ՀՀ դրամ է՝ արտերկրի առաջատար համալսարաններից մեկում ամառային կրթական ծրագրին մասնակցելու համար:



Ակցիան կանցկացվի մինչեւ 2027 թվականի մարտի 31-ը: Մասնակցության համար անհրաժեշտ է նշված ժամանակահատվածում առցանց՝ QR կոդ-ի միջոցով, ձեւակերպել Յունիբանկի Arca «U-Teenager» քարտ եւ կատարել անկանխիկ գործարքներ: Ակցիայի արդյունքներով առավելագույն քանակով անկանխիկ գործարքներ կատարած երեք քարտապանները կստանան մրցանակներ: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին կտրամադրվի գլխավոր մրցանակը՝ մասնակցությունը ամառային կրթական ծրագրին արտերկրում, իսկ երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կստանան նոթբուքեր:

Ակցիային կարող են միանալ նաեւ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ տեղադրելով QR կոդը, որի միջոցով ուսանողները կարող են առցանց ձեւակերպել Arca «U-Teenager» քարտ: Բուհերի համար նախատեսված է առանձին մրցանակ. այն ուսումնական հաստատությունը, որի ուսանողները տրամադրված QR կոդի միջոցով ակցիայի անցկացման ժամանակահատվածում կձեւակերպեն առավելագույն քանակով Arca «U-Teenager» քարտեր, կստանա ֆինանսական աջակցություն՝ համակարգչային սենյակի վերազինման կամ այլ տեխնիկական սարքավորումների ձեռքբերման համար:

Arca «U-Teenager» քարտը թողարկվում եւ առաքվում է անվճար: Arca քարտապաններն անկանխիկ գործարքների դիմաց ստանում են 2% հետվճար (քեշբեք):

Կրթությանն աջակցությունն ու երիտասարդների զարգացման համար նոր հնարավորությունների ստեղծումը Յունիբանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կարեւոր ուղղություններից են: «U-Teenager» ակցիայի միջոցով բանկը նպատակ ունի ոչ միայն երիտասարդ հաճախորդներին առաջարկել ժամանակակից ֆինանսական գործիքներ, այլեւ աջակցել նոր գիտելիքներ ձեռք բերելու եւ զարգանալու նրանց ձգտմանը:

Ակցիայի պայմանների մասին առավել մանրամասն տեղեկատվությունը հասանելի է «U-Teenager» ակցիա հղումով:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՈՃԱՅԻՆ

ՍԵԼԻՆ ԴԻՈՆԸ՝ ՏՊԱՎՈՐԻՉ ԿԱՇՎԵ ԶԳԵՍՏՈՎ

Սելին Դիոնը շարունակում է Փարիզում իր վերադարձի նախապատրաստական շրջանը՝ հերթական անգամ ուշադրության կենտրոնում հայտնվելով իր ոճային կերպարով:

58-ամյա երգչուհին սեպտեմբերի 1-ին դուրս է եկել Փարիզի հյուրանոցից՝ կրելով սեւ կաշվե զգեստ, որի ազատ կտրվածքով վերնամասը համադրված էր ասիմետրիկ փեշի եւ ոչխարի մորթուց դետալների հետ: Ըստ Red Carpet Fashion Awards-ի՝ զգեստը Loewe նորաձեւության տան 2026 թվականի աշուն-ձմեռ հավաքածուից է:

Դիոնը կերպարը լրացրել էր սեւ բարձրակրունկներով եւ նույն գույնի պայուսակով: Երգչուհու մազերը հավաքված էին կոկիկ, հարթ սանրվածքով: Հյուրանոցից դուրս գալիս նա ժպտում եւ ձեռքով ողջունում էր իրեն սպասող երկրպագուներին:

Փարիզյան այս այցը Դիոնի համար առանձնահատուկ նշանակություն ունի. նա պատրաստվում է Ֆրանսիայի մայրաքաղաքում կայանալիք հնգշաբաթյա համերգային ռեզիդենցիային: Երգչուհին նախատեսում է La Defense Arena-ում սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հանդես գալ 16 համերգով:

Առաջիկա ելույթները Դիոնի առաջին խոշոր համերգներն են այն բանից հետո, երբ 2022 թվականի դեկտեմբերին նա հանրությանը հայտնել էր իր մոտ ախտորոշված «կոշտ մարդու համախտանիշի» (stiff-person syndrome) մասին:

Երգչուհին իր ծննդյան օրվա առթիվ երկրպագուներին ուղղված տեսաուղերձում խոսել էր առողջական վիճակի մասին եւ նշել, որ բեմ վերադառնալու հնարավորությունն իր կյանքի «ամենամեծ նվերն» է:

«Ես ուզում եմ, որ իմանաք՝ ինձ մոտ ամեն ինչ լավ է: Ես կառավարում եմ առողջական վիճակս, ինձ լավ եմ զգում, կրկին երգում եմ: Մի փոքր էլ պարել եմ, իհարկե», - ասել էր Դիոնը:

Նա հավելել էր, որ անհամբեր սպասում է Փարիզում իր երկրպագուների հետ հանդիպմանը:

Դիոնը ախտորոշումից հետո առաջին անգամ մեծ բեմ վերադարձավ 2024 թվականին՝ Փարիզի Օլիմպիական խաղերի բացման արարողության ժամանակ: Նա ելույթ ունեցավ Էյֆելյան աշտարակի մոտ՝ արժանանալով հանդիսատեսի ջերմ ընդունելությանը: Նույն տարվա ընթացքում երգչուհին կրկին բեմ բարձրացավ Սաուդյան Արաբիայի Ռիադ քաղաքում՝ Elie Saab-ի «1001 Seasons of Elie Saab» նորաձեւության ցուցադրության ժամանակ:

Այս տարվա ապրիլին Սելին Դիոնը նաեւ թողարկեց վերջին տարիների իր առաջին օրիգինալ երգը՝ «Dansons» («-Պարենք»): Ֆրանսերեն ստեղծագործությունը գրել է երգչուհու երկարամյա համագործակից Ժան-Ժակ Գոլդմանը: Piano ballad-ի ժանրում գրված երգում կրկին ընդգծվում են Դիոնի հզոր վոկալային հնարավորությունները:

Այժմ երգչուհու երկրպագուները սպասում են նրա երկար սպասված փարիզյան վերադարձին, որը կարող է դառնալ Դիոնի բեմական կարիերայի նոր կարեւոր փուլը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՊԱՏԱԿԱԴՐՎԵԼ Է ՆՈՐ ՌԵԿՈՐԴ ՍԱՀՄԱՆԵԼ

Հայ մարտիկ Արման Ծառուկյանը նպատակադրվել է գերազանցել Իսլամ Մախաչեւին եւ նոր ռեկորդ սահմանել UFC-ի թեթեւ քաշային կարգում անընդմեջ տիտղոսի պաշտպանությունների քանակով, գրում է armsport-ը:

Թեեւ տիտղոսային մենամարտից հրաժարվելով՝ Ծառուկյանը բաց թողեց օկտագոնում Մախաչեւին անձամբ հաղթելու հնարավորությունը, այնուամենայնիվ, նա վստահ է, որ UFC-ի չեմպիոնի կարգավիճակում կկարողանա գերազանցել նախկին չեմպիոնի ձեռքբերումը: Նշենք, որ Մախաչեւը դիվիզիոնի ռեկորդակիրն է՝ տիտղոսի 4 պաշտպանությամբ:

«Մտադիր եմ տիտղոսի առնվազն 5 պաշտպանություն անցկացնել: Ուզում եմ գերազանցել թեթեւ քաշային կարգի ռեկորդը: Իսլամն ուներ 4 պաշտպանություն, ուստի ես ուզում եմ 5-ն անել, իսկ հետո կտեսնենք՝ կամ կավարտեմ կարիերաս, կամ կտեղափոխվեմ կիսամիջին քաշային կարգ: Բայց այդ քաշի համար ինձ անհրաժեշտ կլինի մկանային զանգված հավաքել»,- ասել է Ծառուկյանը «Deep Waters» փոդքասթի ժամանակ:

Հիշեցնենք, որ թեթեւ քաշային կարգում ռեկորդ սահմանելուց հետո Իսլամ Մախաչեւը թափուր թողեց չեմպիոնական գոտին եւ բարձրացավ կիսամիջին քաշային կարգ՝ խլելով տիտղոսը ավստրալացի Ջեք Դելա Մադալենայից, ապա հաջողությամբ պաշտպանեց այն՝ մրցավարների միաձայն որոշմամբ հաղթելով իռլանդացի Իեն Մաչադո Գերիին:

Հավելենք, որ շուտով Արման Ծառուկյանը հնարավորություն կունենա հերթական հաղթանակը տոնելու. UFC 331-ի շրջանակում հայ մարտիկն ուժերը կչափի Մաուրիսիո Ռուֆիի հետ:

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՏՐԱՆՍՖԵՐ

Լոնդոնի «Չելսիի» արգենտինացի կիսապաշտպան Էնցո Ֆերնանդեսը պաշտոնապես համալրեց «Մանչեսթեր Սիթիի» կազմը: Այս մասին հաղորդում է «քաղաքայինների» պաշտոնական կայքը, փոխանցում է armsport-ը:

Արգենտինայի ազգային հավաքականի կազմում 2022 թվականի աշխարհի չեմպիոնը մանչեսթերյան ակումբի հետ կնքել է 5 տարվա պայմանագիր: Նշվում է, որ Ֆերնանդեսն արդեն բուժզննում է անցել եւ պաշտոնապես ներկայացվել ակումբի գրասենյակում:

«Բարի գալուստ «Մանչեսթեր Սիթի», Էնցո»,- ասված է ակումբի մամուլի ծառայության տարածած հաղորդագրության մեջ:

Հեղինակավոր Transfermarkt պորտալի տվյալներով՝ արգենտինացու տրանսֆերը «Մանչեսթեր Սիթիի» համար արժեցել է 145 միլիոն եվրո, ինչը ռեկորդային է ակումբի պատմության մեջ:

Նշվում է, որ տրանսֆերային այս գումարը կրկնում է բրիտանական ֆուտբոլի գործող ռեկորդը. նախորդ ամռանը ճիշտ այդքան էր վճարել «Լիվերպուլը» «Նյուքասլին»՝ շվեդ հարձակվող Ալեքսանդր Իսակի տրանսֆերի դիմաց:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿԱՅԻՆ ԱՅԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Հայաստանի ազգային հավաքականի ֆուտբոլիստ Նաիր Թիկնիզյանի շահերը ներկայացնող գործակալ Ալեքսանդր Կլյուեւը «Матч ТВ»-ի հետ զրույցում մեկնաբանել է խաղացողի տեղափոխությունը հունական «Օլիմպիակոս», հայտնում է armsport-ը:

Հիշեցնենք, որ օգոստոսին «Օլիմպիակոսը» պաշտոնապես հայտարարեց սերբական «Ցրվենա Զվեզդայից» Թիկնիզյանի տրանսֆերի մասին:

«Որոշիչ դեր խաղաց այն, որ լավ առաջարկ ստացանք: «Օլիմպիակոսը» լուրջ եւ մեծ խնդիրներ դնող հավակնոտ ակումբ է: Նրանք շատ լուրջ հետաքրքրվածություն ցուցաբերեցին Նաիրի նկատմամբ: Թիմում նրան հիանալի են ընդունել, եւ նա արդեն հասցրել է նշել իր նորամուտը»,- նշել է գործակալը:

Պատասխանելով այն հարցին, թե արդյոք այս ամառ կային տարբերակներ ռուսական ակումբներից, Կլյուեւը նշել է.

«Տարբերակներ կային, բայց հենց հայտնվեց «Օլիմպիակոսի» առաջարկը, միանգամից ընտրություն կատարվեց հօգուտ այս մեծ ակումբի»:

Անդրադառնալով Ռուսաստանի Պրեմիեր լիգա հնարավոր վերադարձին՝ գործակալը հավելել է.

«Երբեւէ, իհարկե, դիտարկում է նման հնարավորություն»:

Նաիր Թիկնիզյանը մոսկովյան «Լոկոմոտիվից» «Ցրվենա Զվեզդա» էր տեղափոխվել 2025 թվականի հունիսին: Սերբական թիմի կազմում նախորդ մրցաշրջանում նա դարձել է երկրի չեմպիոն եւ գավաթակիր՝ ընդհանուր առմամբ անցկացնելով 54 հանդիպում, որոնցում դարձել է 1 գոլի եւ 7 գոլային փոխանցման հեղինակ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈՐՁ

Իսպանական հեղինակավոր AS պարբերականն անդրադարձել է Հայաստանի ազգային հավաքականի վինգեր Էդգար Սեւիկյանի՝ «Ֆերենցվարոշից» իսպանական «Սեուտա» տեղափոխությանը: Մեր ընտրանու ֆուտբոլիստը նոր թիմում հանդես կգա վարձավճարով՝ մինչեւ մրցաշրջանի ավարտը, հայտնում է armsport-ը:

Ինչպես գրում է աղբյուրը, «Սեուտան» տրանսֆերային պատուհանի վերջին ժամերին հաջողությամբ լուծել է հարձակման գծի համալրման հարցը՝ թիմ հրավիրելով միջազգային մեծ փորձ ունեցող Սեւիկյանին եւ «Էլչեի» երիտասարդ հարձակվող Ումարու Կոնարեին:

«Սեւիկյանի տեղափոխությունը հատկանշական է նրա անցած բազմազան ճանապարհի շնորհիվ. նա հասցրել է խաղալ մի քանի երկրներում եւ երկու հավաքականներում»,- նշում է AS-ը՝ հիշեցնելով ֆուտբոլիստի անցած ուղին:

Ծնվելով Մոսկվայում՝ Էդգարն իր պատանեկան տարիների մեծ մասն անցկացրել է իսպանական «Լեւանտեի» ակադեմիայում, որտեղ նաեւ իր նորամուտն է նշել գլխավոր թիմում: Դրանից հետո նա կարիերան շարունակել է Ռուսաստանում, ապա տեղափոխվել հունգարական գրանդ՝ «Ֆերենցվարոշ», որի կազմում եվրագավաթային հարուստ փորձ է ձեռք բերել:

Պարբերականը հատուկ ընդգծում է նաեւ Սեւիկյանի միջազգային կարիերան. Ռուսաստանի տարիքային հավաքականներում հանդես գալուց հետո նա վերջնական ընտրություն կատարեց հօգուտ Հայաստանի ազգային հավաքականի:

Խոսելով խաղային որակների մասին՝ իսպանացի լրագրողները նշում են, որ «Սեուտայի» գլխավոր մարզիչ Խոսե Խուան Ռոմերոն հարձակման եզրափակիչ հատվածի համար հիանալի այլընտրանք է ստացել.

«Սեւիկյանը կարող է գործել երկու եզրերում՝ հատկապես աջից, ինչպես նաեւ հիանալի տեղաշարժվել կենտրոնում: Նա աչքի է ընկնում միջին եւ հեռահար տարածություններից կատարած հարվածներով, թիմակիցների հետ արագ համագործակցելու եւ վճռորոշ, վերջին փոխանցումը գտնելու կարողությամբ»:

Անդրադառնալով մյուս տրանսֆերներին՝ աղբյուրը հավելում է, որ Սեւիկյանից (ով դարձավ թիմի ամառային 11-րդ նորեկը) եւ Կոնարեից բացի, ակումբը ձեռք է բերել նաեւ կենտրոնական կիսապաշտպան Խոակին Գոնսալեսին («Կադիսից»)՝ ամբողջությամբ բավարարելով մարզչական շտաբի պահանջները եզրերում, հարձակման գծում եւ դաշտի կենտրոնում: Թիմն այժմ լիովին համալրված է մրցաշրջանի մարտահրավերներին ընդառաջ:

● *Խամաճիկների պետական թատրոնում սեպտեմբերի 6-ին՝ ժամը 12:30-ին, կկայանա «Փոքրիկն ու Կառլսոնը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս վերադարձնել կամ վերաձեւակերպել սխալ կամ ավել վճարված գումարները:

Գայանե Սահակյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ՀՀ պետական բյուջեի գանձապետական հաշիվներին սխալ վճարում եք կատարել կամ ավելին եք վճարել, գումարի վերադարձման կամ վերաձեւակերպման նպատակով՝ կից դիմումի ձեւով, կարող եք դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն: Դիմումին կից ֆիզիկական կամ իրավաբանական անձը ներկայացնում է վճարումը հաստատող փաստաթղթերի բնօրինակները, մասնավորապես՝ անդորրագիրն ու վճարման հանձնարարագիրը:

Եթե վճարումը կատարված է պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով, ապա որպես վճարումը հաստատող փաստաթուղթ կարող է հանդիսանալ վճարումների պետական էլեկտրոնային համակարգի գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը, ինչպես նաեւ վճարված գումարը վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին գանձող մարմնի տեղեկանքը:

Եթե չգիտեք, թե որ մարմինն է գանձում կատարել, ապա անհրաժեշտ է մուտք գործել կայքի գանձապետական հաշիվներ բաժինը, գտնել համապատասխան հաշվեհամարը, որին կից նշված է նաեւ հաշիվը տնօրինող մարմնի անվանումը:

Եթե դիմումը ներկայացվում է լիազորված անձի կողմից, ապա վերադարձը կամ վերաձեւակերպումը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաեւ նոտարի կողմից վավերացված լիազորագիրը:

Եթե վերադարձման ենթակա գումարները վճարված են անչափահաս երեխաների անունով, ապա դիմումը ներկայացվում է ծնողներից մեկի անունով, իսկ վերադարձը հիմնավորող փաստաթղթերի հետ տրամադրվում են նաեւ ծննդյան վկայականների պատճենները:

Վերադարձման դեպքում դիմումում պետք է նշել նաեւ բանկային ռեկվիզիտները, այսինքն՝ այն բանկի եւ մասնաճյուղի անունը, որտեղից դիմողը պետք է ստանա վերադարձված գումարը եւ անձնագրի տվյալները/սերիան, ում կողմից է տրված, պատճենը/: Բանկային հաշվեհամարի առկայության դեպքում անձնագրի տվյալների ներկայացումը պարտադիր չէ: Վերաձեւակերպման դեպքում դիմումի մեջ պետք է նշել ճիշտ գանձապետական հաշվի համարը:

Վերոնշյալ փաստաթղթերի առկայության դեպքում դիմողը 5-օրյա ժամկետում տեղեկացվում է գործարքը /գումարի վերադարձ կամ վերաձեւակերպում/ կատարված լինելու մասին:

ՀՀ ֆինանսների նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Կա՞ որեւէ ընդհանուր հասկացություն, թե ինչ են բարին ու չարը:

Գրիգոր Կարապետյան, 67 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Բարին Աստված է, այն սերն է, որով մարդը գիտակցաբար գնում է դեպի Տերը: Այն մարդը, ով իր սրտում սեր ունի, երբեք չի կարող վատ բաներ անել: Երբ մարդ Աստծով ներշնչված հոգեպես խաղաղ է, հավասարակշռված, չի կարող վատ բաներ խորհել, ինչ-որ մեկին վնասել, անարգել: Դրան հակառակը չարն է, որ Աստծո հետ կապ չունի:

Աստված չի ստեղծել ո՛չ չարությունը, ո՛չ էլ չարին: Ինչպես մութը լույսի բացակայությունն է, այնպես էլ չարը բարու բացակայությունն է: Չարն իր մեջ սեր չունի, որովհետեւ Աստվածաշունչն ասում է. սերը չի նախանձում, չի հայհոյում, չի բամբասում եւ այլն (տե՛ս՝ Ա Կորնթ. 13:4-7), իսկ ով սեր չունի՝ չար է, հետեւաբար բամբասում է, սպանում, հայհոյում, անարգում, վերացնում այն, ինչ Աստված է ստեղծել: Չարը գիտակցաբար մերժում է բարուն: Այսինքն՝ ոչ թե չարն է գալիս, հայտնվում մարդկանց մեջ, այլ մարդիկ իրենց կամքով են չարանում՝ մերժելով բարին:

Հայ առաքելական սուրբ եկեղեցի

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Երեւանում՝ Կորեայի ձորում, փտած, դարն ապրած փայտե էլեկտրասյուները ուժեղ քամու հետեւանքով տապալվել եւ փակել են ճանապարհը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 5 + 9 + 22 + 27
Կոտայքի լեռներ	+ 6 + 10 + 22 + 26
Կոտայքի նախալեռներ	+ 13 + 15 + 27 + 29
Գեղարքունիք	+ 6 + 11 + 16 + 21
Լոռի	+ 10 + 14 + 22 + 26
Տավուշ	+ 11 + 14 + 23 + 26
Արագածոտնի լեռներ	+ 5 + 9 + 22 + 26
Արագածոտնի նախալեռներ	+ 12 + 16 + 27 + 31

Արարատ	+ 13 + 16 + 29 + 32
Արմավիր	+ 13 + 16 + 31 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 5 + 9 + 19 + 23
Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 16 + 31 + 33
Սյունիքի լեռներ	+ 5 + 9 + 16 + 19
Սյունիքի նախալեռներ	+ 10 + 14 + 20 + 24
Սյունիքի հովիտներ	+ 17 + 20 + 28 + 31
Երեւան	+ 15 + 17 + 30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **02.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*